Կ Ա Ր Ծ Ի Ք

Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քրեական վարույթ նախաձեռնելիս ծագող իրավահարաբերությունները կարգավորող դատավարական նորմերը տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում մի շարք խնդրահարույց հարցեր են առաջացնում: Այնինչ, նշված քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ ներկայիս իրավունքի զարգացմանը համապատասխանող համակողմանի հետազոտություններ, հատկապես հայրենական դատավարագիտության մեջ՝ ներպետական օրենսդրության, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումներին համահունչ, բացակայում են, որոնք կնպաստեն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննության արդյունքում դատավարական որոշում կայացնելիս օրենքի գերակայության սկզբունքի ապահովմանը, կզարգացնեն քրեական գործ հարուցելու փուլում ապացույցների ձեռքբերման և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման դատավարական հնարավորությունները, համակարգային վերլուծության կենթարկեն դատախազական հսկողության և դատական վերահսկողության արդյունավետության բարձրացման

երաշխիքները, որոնք առանցքային դերակատարություն ունեն են անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Նման պայմաններում քրեական վարույթ նախաձեռնելու քրեադատավարական կարգի համակողմանի ուսումնասիրությունը ժամանակի հրամայական է՝ հաշվի առնելով նաև, որ այն քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառման յուրահատուկ սահմանագիծ է, ինչպես նաև հանցագործության մասին ներկայացված յուրաքանչյուր հաղորդմանը արձագանքելու պետության պոզիտիվ պարտավորություն: Ուստի, այս թեմայով գիտական հետազոտության կատարումը խիստ անհրաժեշտ է մի կողմից օրենսդրական կարգավորումների թերությունները, մյուս կողմից՝ հակասական իրավակիրառ պրակտիկայի խնդիրները բացահայտելու և համապատասխան լուծումներ առաջարկելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ներկայումս շրջանառության մեջ է գտնվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, ակնհայտ է, որ քրեական վարույթ նախաձեռնելու քրեադատավարական կարգի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա նաև բարելավել այդ նախագծի համապատասխան իրավակարգավորումները՝ ամրապնդելով անձանց իրավունքների պաշտպանությանը և իրավական երաշխիքները:

Վերոգրյալի հաշվառմամբ, քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը հիմնավորված է իրավունքի զարգացման արդի ժամանակաշրջանում:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է իրագործել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև հանգամանալի հետազոտության ենթարկել քրեական վարույթ նախաձեռնելու քրեադատավարական կարգին նվիրված խնդրահարույց մի շարք հարցեր և առաջարկել գիտականորեն հիմնավորված ժամանակակից լուծումներ: Մասնավորապես, հեղինակին հաջողվել է ներկայացնել քրեական վարույթ նախաձեռնելու հասկացությունը, խնդիրները, հստակեցնել քրեական վարույթ նախաձեռնելու հիմքի հասկացությունը և առիթների շրջանակը, որոշակիացնել

քրեական գործ հարուցելու փուլում ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը, վերհանել անձի նկատմամբ, ինչպես նաև մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու առանձնահատկությունները, համեմատաիրավական վերլուծության ենթարկել քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի իրավակարգավորումները:

Գիտական նորույթի տեսանկյունից՝ հատկապես ուշագրավ են հեղինակի կողմից առաջ քաշվող պնդումները քրեական վարույթ նախաձեռնելու առիթների շրջանակի, անձի նկատմամբ քրեական վարույթ նախաձեռնելու դատավարական կարգի, մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու կառուցակարգերի վերաբերյալ, որոնց ընթացքում յուրաքանչյուր դեպքում կարևորվել է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիքների նախատեսումը:

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակն իր դիտարկումները ներկայացնելիս օգտագործել է նաև վերաբերելի՝ արտասահմանյան երկրների հարուստ տեսական աղբյուրներ և իրավակիրառ պրակտիկայի նյութեր: Այս համատեքստում, հատկապես ուշագրավ է հեղինակի կողմից օգտագործված արտասահմանյան գիտական աշխատությունների, օրենսդրական կարգավորումների վերլուծությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով սահմանված չափանիշների ուսումնասիրությունը: Ընդ որում, հարկ է նկատել, որ դրանք ոչ թե մեխանիկորեն վկայակոչվել են աշխատանքում, այլ վերաբերելի հարցերի համատեքստում վերլուծվել են՝ դրանց հիման վրա ձևավորելով հեղինակային արժեքավոր դիրքորոշումներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, պետք է ընդգծել, որ հեղինակի կողմից նաև համակողմանի գնահատման է ենթարկվել նաև քրեական վարույթ նախաձեռնելու իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես, հեղինակն իր պնդումները

ներկայացնելիս հիմնվել է նաև ներպետական դատարանների կողմից ձևավորված պրակտիկայի վրա և ներկայացրել գործնական առաջարկություններ՝ ուղղված իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդիրների լուծմանը:

Ներկայացված ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է աշխատանքի նպատակով և հետազոտվող հիմնախնդիրների շրջանակով: Այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող չափորոշիչներին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից:

Թեկնածուական ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են ու տրամաբանորեն փաստարկված: Աշխատանքում արված եզրահանգումներն արժեքավոր են ինչպես հայրենական դատավարագիտության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի զարգացման համատեքստում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության կառուցվածքին և բովանդակությանը:

Այդուհանդերձ, ներկայացված թեկնածուական աշխատանքում ներկայացված որոշ դիտարկումների կապակցությամբ կցանկանայինք ներկայացնել որոշ նկատառումներ:

Այսպես.

Հետզաոտության նպատակի ու խնդիրների ձևակերպումներից միանգամայն բխում է ատենախոսության շրջանակներում հանցագործության մասին հաղորդման ձևական ու բովանդակային կողմերի, դրանց ներկայացվող պահանջների ու չափանիշների վերլուծության, համադրման ու հստակեցման անհրաժեշտությունը: Ընդ որում, խնդրո առարկան հարկ է դիտարկել քրեադատավարական իրավակարգավորումների և նախադեպային պրակտիկայի լույսի ներքո: Ըստ այդմ՝ պաշտպանության ներկայացվող 1-3-րդ դրույթների համատեքստում անհրաժեշտ էր ձևի ու բովանդակության հարաբերակցության տեսանկյունից համակարգային

վերլուծության ենթարկել մասնավորապես Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի Է. Կարապետյանի գործով 13.07.2007թ. № ՎԲ-133/07, Ռ. Նիազյանի գործով 31.05.2014թ. № ԵԿԴ/0118//11/13 և Հ. Մանուկյանի գործով 30.03.2019թ. № ԵԿԴ/0154/11/14 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ *որպեսզի հանցագործության մասին հաղորդումը քրեական գործ հարուցելու համար առիթ հանդիսանա, այն պետք է պարունակի տեղեկություն նախապատրաստվող կամ կատարված կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող, այլ ոչ թե՝ ցանկացած տվյալների առկայության մասին:*

Բանն այն է, որ անգամ այս պարագայում ներկայումս դատական պրակտիկայում հիմնախնդիրը շարունակում է մնալ ամբողջովին չլուծված, քանի որ լրջագույն խնդիր է դարձել հանցագործության մասին հաղորդման հասկացության հստակեցումը, այն վարչական վարույթի կարգով քննարկվող դիմում, բողոքներից սահմանազատելու ու պատշաճ քրեադատավարական ընթացք տալու հարցը:

Այնուհետև, ատենախոսությունում հեղինակը նշել է, որ մասնավոր մեղադրանքի գործերով ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքի բացակայության դեպքում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է անդրադարձ կատարի բացառապես ենթադրյալ արարքի մասնավոր մեղադրանքի գործ լինելու հանգամանքին՝ որևէ կերպ քննարկման առարկա չդարձնելով դրա կատարմանը որևէ անձի առնչության հարցը (տե՛ս էջեր 89-93): Կարծում ենք, որ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու պահին արդեն իսկ առկա է լինում տեղեկություններ ենթադրյալ հանցանք կատարած անձի վերաբերյալ, որի պայմաններում, գտնում ենք, որ հիմնավոր չէ անձի առնչությանը չանդրադառնալը, քանի որ դրանից կարող է տուժել հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը:

Միևնույն ժամանակ, հեղինակն ատենախոսությունում ներկայացրել է հիմնավորումներ՝ առաջարկելով հրաժարվել հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները որպես քրեական գործ հարուցելու

ինքնուրույն առիթ դիտարկելուց: (տե՛ս էջեր 54-59): Կարծում ենք, որ 21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումների ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում դրանց տարածվածության տեսակարար մեծ կշռի պայմաններում նշված պնդումն ընդունելի չէ, ուստի լրատվության միջոցների հաղորդումները որպես քրեական գործ հարուցելու ինքնուրույն առիթ դիտարկելը միանգամայն արդարացված է:

Այս կապակցությամբ կարծում ենք հրապարակային պաշտպանության ժամանակ հեղինակից ակնկալվում է լրացուցիչ հիմնավորել սեփական տեսլականը:

Բացի դրանից, կատարված ուսումնասիրությունն էականորեն կշահեր, եթե հեղինակն անդրադարձ կատարեր նաև քրեական գործ հարուցելու փուլում նախապատրաստված նյութերի միացման հնարավորության հարցին, մասնավորապես այն դեպքերում, երբ հանցագործության մասին նույնաբովանդակ հաղորդում է ներկայացվում քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող տարբեր մարմինների, որպիսի դեպքերն իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են:

Հարկ է միաժամանակ փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը:

Վերը նշվածի պայմաններում, գտնում ենք, որ Տիգրան Սամվելի Ղազարյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական, համալիր և ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ, ինչի մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրափակիչ մասում շարադրված հետևությունները:

Գտնում եմ, որ Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը միանշանակ համապատասխանում է ՀՀ

ԲՈԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր,

Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Վ.Գ.Ենգիբարյան**

Վ.Գ.Ենգիբարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Հ.Մ.Խաչիկյան**

31 օգոստոսի 2020 թ.